ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«10» ապրիլ 2023թ. ք. Երևան, Ս. Դավթի 87Ա

ՈՐՈՇՈՒՄ Ն 246-Ա

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս քննարկելով ֆիզիկական անձ Արտաշ Անդրանիկի Զիրաքիի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 31274/2022/ԿՈՒՎ4/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ Արտաշ Անդրանիկի Զիրաքիի (ք. Երևան, Արաբկիր, Քեռու փողոց, 52/13 տուն, ՀՎՀՀ 72981401, ՀԾՀ՝ 3403550540) չկատարված հարկային պարտավորությունը 20.10.2022 թվականի դրությամբ կազմել է 12.259.266 դրամ, որից հարկ՝ 10.228.490 դրամ, տույժ՝ 2.030.776

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 10.03.2023թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկությունների համաձայն ֆիզիկական անձ Արտաշ Անդրանիկի Զիրաքին (1/2 բաժնային սեփականությամբ), Վարուժան Թահերմիզայի Քեշիշյանի (1/4 բաժնային սեփականությամբ) և Ռոբերթ Յեզնիկի Ահանգարիի (1/4 բաժնային սեփականությամբ) հետ միասին փաստացի հանդիսացել են քաղաք Երևան, Արաբկիր, Քեռու փողոց, 52/1 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի կառուցապատողներ, վերջիններիս կողմից նշված հասցեի բնակարանները հասցեավորված են որպես բնակելի տներ, սակայն ըստ հարկային մարմնում առկա փաստաթղթերի, իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների օտարման գործարքներ:

Ստորև ներկայացվում է ֆիզիկական անձ Արտաշ Անդրանիկի Զիրաքիի կողմից 2018-2021թթ ընթացքում իրականացված օտարման գործարքները.

1. 19.10.2018 թվականին ք. Երևան, Արաբկիր Քեռու փ.52/6 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 15,684.900 դրամ պայմանագրային արժեքով (1/2 բաժնեմասը):
2. 17.01.2019 թվականին ք. Երևան, Արաբկիր Քեռու փ.52/10 հասցեում գտնվող անշարժ գույք՝ 13.500.000 դրամ պայմանագրային արժեքով (1/2 բաժնեմասը) :
3. 24.01.2020 թվականին ք. Երևան, Արաբկիր Քեռու փ.52/2հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 8.900.000 դրամ պայմանագրային արժեքով (1/2 բաժնեմասը):
4. 06.10.2020 թվականին ք. Երևան, Արաբկիր Քեռու փ.52/7 հասցեում գտնվող անշարժ գույք՝ 14.000.000 դրամ պայմանագրային արժեքով (1/2 բաժնեմասը) :
5. 16.11.2020 թվականին ք. Երևան, Արաբկիր Քեռու փ.52/3 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 7.450.000 դրամ պայմանագրային արժեքով (1/2 բաժնեմասը):
6. 22.01.2021 թվականին ք. Երևան, Արաբկիր Քեռու փ.52/8 հասցեում գտնվող անշարժ գույք՝ 8.300.000 դրամ պայմանագրային արժեքով (1/2 բաժնեմասը) :
7. 22.01.2021 թվականին ք. Երևան, Արաբկիր Քեռու փ.52/12 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 7.100.000 դրամ պայմանագրային արժեքով (1/2 բաժնեմասը):
8. 25.03.2021 թվականին ք. Երևան, Արաբկիր Քեռու փ.52/4 հասցեում գտնվող անշարժ գույք՝ 11.500.000 դրամ պայմանագրային արժեքով (1/2 բաժնեմասը) :
9. 08.04.2021 թվականին ք. Երևան, Արաբկիր Քեռու փ.52/5 հասցեում գտնվող անշարժ գույք՝ 8.300.000 դրամ պայմանագրային արժեքով (1/2 բաժնեմասը) :
10. 08.04.2021 թվականին ք. Երևան, Արաբկիր Քեռու փ.52/1 հասցեում գտնվող անշարժ գույք՝ 7.550.000 դրամ պայմանագրային արժեքով (1/2 բաժնեմասը) :

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 145-րդ հոդվածի 1-ին ենթակետի համաձայն՝ բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, անհատական բնակելի տան կառուցապատող համարվող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների՝ այլ ֆիզիկական անձին օտարման դեպքում օտարված շենքի կամ տարածքի (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների) օտարումից ստացվող եկամուտը հաշվարկվում է գործարքի փաստացի գնից ելնելով:

Համաձայն Օրենսգրքի 150-րդ հոդվածի 11-րդ կետի կառուցապատողի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների օտարումից ստացված եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի՝ ֆիզիկական անձը պարտավոր է մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների գումարը՝ համաձայն Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի:

Ֆիզիկական անձ Արտաշ Անդրանիկի Զիրաքիի կողմից իրականացված վերը նշված գործարքի մասով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել 2018-2021թթ. եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկները:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը եկամտային հարկի մասով կազմում է **12.259.266** դրամ, որից 2018 թվականի մասով՝ հարկ՝ 1.568.490 դրամ, տույժ՝ 658.374 դրամ, 2019 թվականի մասով՝ հարկ՝ 1.350.000 դրամ, տույժ՝ 394.200 դրամ, 2020 թվականի մասով՝ հարկ՝ 3.035.000դրամ, տույժ՝ 665.272 դրամ, 2021թվականի մասով՝ հարկ 4.275.000 դրամ, տույժ՝ 312.930 դրամ, որն առաջացել է ֆիզիկական անձի կողմից անշարժ գույքի օտարման գործարքների արդյունքում և տվյալ գործարքներից բխող 2018-2021թթ. եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկները օրենքով սահմանված ժամկետում հարկային մարմին չներկայացնելու, ինչպես նաև հարկի գումարները սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման

կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորության վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 225 հոդվածով, 398-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ, և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ֆիզիկական անձ Արտաշ Անդրանիկի Զիրաքիից գանձել **12.259.266** ՀՀ դրամ պարտավորության գումար, ինչպես նաև սույն որոշման կատարման օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերը համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

20.10.2022թ-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	22.04.2019թ.	1.568.400	658.374		2.226.864	պետական բյուջե	900008000490
2	Եկամտային հարկ	20.04.2020թ	1.350.000	394.200		1.744.200	պետական բյուջե	900008000490
3	Եկամտային հարկ	20.04.2021թ	3.035.000	665.272		3.700.272	պետական բյուջե	900008000490
4	Եկամտային հարկ	20.04.2022թ	4.275.000	312.930		4.587.930	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել ֆիզիկական անձին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին, կամ վերադաս վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____
Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության
հարկադիր գանձման և պարտավորությունների
կատարման ապահովման բաժնի առաջատար
մասնագետ Արեգա Պարսեղյան
հեռ.010 30/9191 /9136/